



Անձնական էջի օգտագործման կանոններ

Մահմանումներ

Հաճախորդ - - «Մոզո» ՈւՎԿ -ում վարկ սպասարկող կամ վարկն արդեն սպասարկած և մարած ֆիզիկական անձ, ինչպես նաև ֆիզիկական անձ, ով առցանց վարկային հայտի դիմում է ներկայացրել:

Ծրագրային համակարգ - «Մոզո» ՈւՎԿ ծրագրային համակարգ

Մոզո կամ Ընկերություն- «Մոզո» Ունիվերսալ վարկային կազմակերպություն

Անձնական էջ - - www.mogohima.am կայքից հասանելի հաճախորդների անձնական էջ

Օգտագործող – Հաճախորդ, որ օգտվում է www.mogohima.am կայքից հասանելի իր անձնական էջից

1. Անձնական էջի ստեղծում և ակտիվացում
 - 1.1. Անձնական էջ ստեղծվում է հետևյալ դեպքերում՝
 - 1) Երբ հաճախորդը առցանց «Մոզո Հիմա» -ի դիմում-հայտ է ներկայացվում և բարեհաջող անցնում, այդ թվում՝ անձնական էջի ակտիվացման համար համակարգի կողմից իրականացվող ստուգումները
 - 2) Հաճախորդը սպասարկում է կամ արդեն սպասարկել և լրիվ մարել է ավտոմեքենայի գրավադրմամբ վարկ և/ կամ ավտովարկ և/կամ «Մոզո Հիմա» : Տվյալ դեպքում Անձնական էջի ակտիվացման համար հաճախորդը պետք է բարեհաջող կերպով անցի համակարգի կողմից իրականացվող ստուգումները:
 - 3) Հաճախորդը ոչ առցանց տարբերակով ներկայացնում է ավտոմեքենայի գրավադրմամբ և/ կամ ավտովարկ և/կամ «Մոզո Հիմա» վարկ ստանալու դիմում: Տվյալ դեպքում Անձնական էջի ակտիվացման համար հաճախորդը պետք է բարեհաջող կերպով անցի համակարգի կողմից իրականացվող ստուգումները:
 2. Յուրաքանչյուր անգամ Անձնական էջ մուտք գործելու համար Օգտագործողը պետք է անցնի նույնականացում՝ մուտքագրելով որպես մուտքանուն կիրառվող տվյալներից որևէ մեկը և համակարգում ֆիքսված իր բջջային հեռախոսահամարին ուղարկվող մեկանգամյա անցակոդը:
3. Վարկառուի իրավունքները և պարտականությունները
 - 3.1. Վարկառուն պարտավորվում է.
 - 1) Չօգտագործել Անձնական էջը անօրինական գործողությունների իրականացման նպատակով, ներառյալ խարդախության կամ փողերի լվացման համար,
 - 2) Անձնական էջից օգտվելիս տրամադրել բացառապես ճիշտ տեղեկատվություն,
 - 3) Օգտագործել Անձնական էջը բացառապես գործունակ վիճակում և չգտնվելով ակոհոլի, թմրանյութերի, հոգեմետ նյութերի կամ այլ թունավոր նյութերի ազդեցության տակ,
 - 4) Օգտագործել բացառապես ապահով միջոցներ և սարքավորումներ էլեկտրոնային հաղորդակցության և տվյալների փոխանցման համար:
 - 3.2. Ընկերությունը պարտավորվում է.
 - 1) Հաճախորդի Անձնական էջում արտացոլել ճշգրիտ տեղեկություն:
 - 2) Անձնական էջով վարկի հաստատված դեպքում ապահովել սահմանված ժամկետներում և եղանակով գումարի տրամադրումը:
 - 3.3. Ընկերություն իրավունք ունի.

- 1) Միակողմանի փոփոխել սույն Պայմանները: Պայմանների նոր տարբերակը պետք է հրապարակվի Ընկերության կողմից կայքում, և Վարկառուն այն հաստատում է Անձնական էջ մուտքործելու միջոցով, եթե վերջինս ցանկանում է շարունակել Անձնական էջի օգտագործումը
- 2) Արգելափակել Հաճախորդի Անձնական էջը համաձայն սույն պայմանների դրույթների

4. «Մոզո Հիմա» վարկառուներին Անձնական էջից հասանելի ծառայություններ

- 4.1. Անձնական էջի միջոցով Վարկառուն կարող է դիմել վարկի համար.
 - 1) Ընտրել նախընտրելի վարկի գումարը
 - 2) Դիմել վարկի համար՝ նախապես ծանոթանալով ծառայությունների մատուցման պայմաններին
 - 3) Ստանալ լավագույն առաջարկը Մոզոյից (հասանելի գումարի առկայության դեպքում)
 - 4) Հաստատել առաջարկը: Ընդ որում՝ հաստատելով կայքում ներկայացված Պայմանները՝ Հաճախորդը հաստատում է, որ վերջինս կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել:
 - 5) Այս գործողություններից հետո, Հաճախորդը սահմանված ժամկետներում կարող է մոտենալ պայմանագրի ստորագրման՝ անցնելով պահանջվող նույնականացումը և ստորագրելով պայմանագիրը, ստանալ վարկի գումարը:
- 4.2. Անձնական էջի միջոցով Վարկառուն կարող է դիմել կրկնվող վարկի համար, ստանալ առաջարկներ Մոզոյից և հաստատել նախընտրելի առաջարկը՝ հետևյալ գործողությունների հաջորդական կատարման միջոցով.
 - 1) Ընտրել նախընտրելի կրկնվող վարկի գումարը
 - 2) Դիմել կրկնվող վարկի համար՝ նախապես ծանոթանալով ծառայությունների մատուցման պայմաններին
 - 3) Ստանալ լավագույն առաջարկը Մոզոյից (հասանելի գումարի առկայության դեպքում)՝ Հաստատել առաջարկը: Ընդ որում՝ հաստատելով կայքում ներկայացված Պայմանները՝ Հաճախորդը հաստատում է, որ վերջինս կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել Մոզոյի հետ կնքված Պայմանագրի շրջանակներում կրկնվող վարկեր ստանալու վերաբերյալ՝ տեղյակ լինելով, որ Անձնական էջի միջոցով հաստատված Պայմանագրի փոփոխությունները պարտադիր են, և Պայմանագրի փոփոխություններից բխող պարտականությունների կատարման պարտավորության մասին:
 - 4) Այս գործողություններից հետո, Հաճախորդը կարող է ստանալ կանխիկ գումարը՝ համաձայն նախապես ընտրված տարբերակի և անցնելով պահանջվող նույնականացումը:
- 4.3. Տեսնել Գործող վարկերի մասով ընթացիկ իրավիճակը, պարտքի մեծություն, մարման վերջնաժամկետ, երկարաձգման համար անհրաժեշտ գումար:
5. Անձնական էջի արգելափակում, փակում և արգելափակումից հանում
- 5.1. Մոզոն իրավունք ունի արգելափակել կամ ջնջել Անձնական էջը առանց ծանուցման, եթե:
 - 1) Վարկառուն խախտել է Պայմանագիրը կամ սույն Պայմաններ կամ այլ անօրինական կերպով օգտագործում է Պորտալը,
 - 2) Վարկառուն Մոզոյին ներկայացրել է սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր;
 - 3) Վարկառուն համաձայն չէ Մոզոյի կողմից կատարված սույն Պայմանների փոփոխության հետ,

- 4) Պայմանագիրը դադարեցվել, չեղարկվել, ուժը կորցրած, անվավեր կամ առոչինչ է ճանաչվել:
- 5.2. Եթե Ընկերությունը արգելափակել է Վարկառուի Անձնական էջը, ապա Վարկառուի ծանուցումը Մասնաճյուղում կամ հեռախոսի միջոցով Հեռախոսահամարից ստանալուց հետո, Ընկերությունը իրավունք ունի միակողմանիորեն Անձնական էջը հանել արգելափակումից:
- 5.3. Վարկառուն ակտիվացնում է արգելափակված Անձնական էջը՝ անցնելով համակարգի կողմից պահանջվող նույնականացումը:
6. Սույն Պայմանները գործում են անորոշ ժամկետով, մինչև Կողմերի՝ Պայմանագրով սահմանված պարտականությունների պատշաճ կատարումը: